

**«ՀԱՏՈՒԿ ԿԱՊ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿ-ԳՀԾՁԲ-17/03**

ք. Երևան

«31» հոկտեմբերի 2017թ.

«Հատուկ կապ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա.Տիգրանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տուրբոլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«Հատուկ կապ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան Չարենցքի 4/129

«Յուսիքանկ» ԲԲԸ

Հ/Հ 24104023914700

ՀՎՀՀ 02509254



ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՒՐԲՈՒԼԱՅՆ» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան, Շիրազի 39/1

«Ակբա Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220250122052000

ՀՎՀՀ 05205222



Հավելված N 1
 «31» 10 2017թ. կնքված
 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԵՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Որամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը/«Որամ»	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50112000	ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված գնացուցակի	որամ	1600000	1	Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.

ԳՆՈՐԴ

«Հատուկ կապ» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Չարենցքի 4/129
 «Յունիբանկ» ԲԲԸ
 Հ/Հ 24104023914700
 ՀՎՀՀ 02509254



ՎԱՃԱՌՈՂ

«ՏՈՒՐԲՈԼԱՅՆ» ՍՊԸ
 ՀՀ ք. Երևան, Շիրազի 39/1
 «Ակրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220250122052000
 ՀՎՀՀ 05205222



ԳՆԱՑՈՒՑԱԿ

ՀՀ դրամ

h/h	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 1		
		Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel vectra մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999 թթ	Daewoo մակնիշի ա/մ /2 հատ, արտադրված 2008 թթ.
1	2	3	4	5
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel vectra մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999 թթ	Daewoo մակնիշի ա/մ /2 հատ, արտադրված 2008 թթ.
1	Բռնկման համակարգի ստուգում	5250	8400	10500
2	Կցորդման համակարգի ստուգում	5250	8400	10500
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	7350	12600	12600
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	8400	10500	10500
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5250	8400	8400
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Վազ 2107 մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 2008 թվականին	Opel vectra մակնիշի ա/մ /1 հատ, արտադրված 1999 թթ	Daewoo մակնիշի ա/մ /2 հատ, արտադրված 2008 թթ.
	1.Շարժիչ			
6	Շարժիչի հանում և տեղադրում	52500	105000	105000
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	42000	84000	84000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	31500	63000	63000
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	21000	52500	52500
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	26250	63000	63000
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	5250	12600	12600
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	5250	15750	15750
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	5250	12600	12600
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	3150	10500	10500
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3150	10500	10500
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	5250	12600	12600
17	Ծնկածն լիսեռի հղկում	3150	10500	10500
18	Ծնկածն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	5250	12600	12600
19	Ծնկածն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	3150	10500	10500
20	Ծնկածն լիսեռի ատամնանիվի փոխարինում	3150	10500	10500
21	Ծնկածն լիսեռի ուղղում	4200	8400	8400
22	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	3150	7350	7350

23	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	3150	7350	7350
24	Շարժիչի բլոկի փոխարինում	10500	26250	26250
25	Շարժիչի գլանի փոխարինում (г и л з о в к а)	8400	21000	21000
26	Մխոցի փոխարինում 1 հատ	3150	10500	10500
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	12600	12600
28	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	2100	5250	5250
30	Փոկանիվի փոխարինում	3150	7350	8400
31	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում		31500	31500
32	Շարժիչի շղթայի փոխարինում	15750		
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	5250	10500	10500
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	5250	10500	10500
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	2100	6300	7350
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	5250	10500	10500
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	5250	12600	12600
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	5250	10500	10500
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	3150	6300	6300
40	Յուղի ծորակի փոխարինում	2100	5250	5250
41	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3150	8400	8400
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	10500	10500
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	3150	12600	12600
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
45	Շարժիչի կափույրի փոխարինում	3150	8400	8400
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	3150	8400	8400
47	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	5250	12600	12600
48	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	3150	8400	8400
49	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	3150	8400	9450
50	Ատամնանիվի փոխարինում		10500	10500
51	Ատամնանիվի փոկի փոխարինում		21000	21000
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում		10500	10500
53	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	5250	8400	8400
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	3150	8400	8400
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	3150	7350	7350
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	3150	8400	8400
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	4200	9450	9450
58	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	2100	5250	5250
59	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	3150	10500	10500
60	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում		8400	8400
61	Շարժիչի գամասեղի փոխարինում	5250	10500	10500
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	7350	15750	15750

63	Գլխիկի հեղույսի փոխարինում	3150	6300	6300
64	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	2100	5250	5250
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	5250	10500	10500
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	5250	10500	10500
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
67	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2100	4200	4200
68	Ավտոմեքենայի յուղում	2100	5250	5250
69	Համակարգչային ախտորոշում, թերութունների վերացմամբ	5250	12600	12600
70	Յուղի ռադիատորի փոխարինում	5250	12600	12600
71	Յուղի ռադիատորի նորոգում	5250	12600	12600
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	7350	18900	18900
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	3150	6300	6300
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2100	6300	6300
75	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	3150	7350	7350
76	Օդի զտիչի փոխարինում	1050	4200	4200
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
78	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	2100	5250	5250
79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում			10500
80	Կարբյուրատորի վերանորոգում			10500
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	5250	12600	
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	8400	21000	
83	Բոցամուղի կոդավորում	5250	15750	
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	3150	10500	
85	Բենզամղիչի փոխարինում	3150	8400	8400
86	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	3150	7350	7350
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	10500	10500
88	Բռնկման կարգավորում	3150	7350	7350
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5250	12600	12600
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	15750	15750
92	Վառելիքի բաքի մաքրում	5250	10500	10500
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	3150	7350	7350
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	6300	6300
95	Տրամյորի վերանորոգում	3150	6300	6300
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	3150	6300	6300
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	3150	6300	6300
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	5250	10500	10500
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	3150	8400	8400
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3150	8400	8400
101	Տվիչի փոխարինում	3150	10500	10500

3. Սառեցման և արտածման համակարգ				
102	Հովհարի փոխարինում	3150	5250	6300
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2100	5250	5250
104	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	2100	5250	5250
105	Ռադիատորի նորոգում	5250	15750	15750
106	Շերտափեղկի փոխարինում	3150	8400	8400
107	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	5250	8400	8400
108	Ընդարձակող բաքի փոխարինում	3150	8400	8400
109	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	3150	8400	8400
110	Ջրի ծորակի փոխարինում	3150	8400	8400
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	3150	8400	8400
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	10500	26250	26250
114	Վառարանի ռադիատորի նորոգում	5250	10500	10500
115	Վառարանի շարժիչի փոխարինում	5250	10500	10500
116	Թերմոստատի փոխարինում	5250	10500	10500
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	5250	10500	10500
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	3150	10500	10500
119	Գեներատորի փոկի փոխարինում	2100	5250	5250
120	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	2100	5250	5250
121	Ջրի ռադիատորի վերանորոգում	5250	10500	10500
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	2100	5250	5250
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2100	5250	5250
124	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	2100	5250	5250
125	Խլարարի անուրի (x a m y τ) փոխարինում	2100	5250	5250
126	Խլարարի ներդիրի փոխարինում	2100	5250	5250
127	Խլարարի կախոցի փոխարինում	3150	7350	7350
128	Հովացման հեղուկի փոխարինում	2100	5250	5250
4. Կցորդում և ՓՏ				
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	7350	7350
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	3150	7350	7350
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	5250	15750	15750
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	15750	15750
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	8400	8400
135	Կցորդման երկժանիի փոխարինում	4200	8400	8400
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	42000	84000	84000
137	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	21000	52500	52500
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	5250	12600	12600
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	5250	12600	12600

140	ՓՏ-ի հանում և տեղադրում	21000	42000	42000
141	ՓՏ-ի քանդում,արատավորում, հավաքում	15750	31500	31500
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	5250	10500	10500
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5250	10500	10500
144	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	5250	10500	10500
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	5250	10500	10500
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	5250	12600	12600
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	4200	8400	8400
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	3150	8400	8400
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	3150	10500	10500
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	3150	7350	7350
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	3150	7350	7350
152	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	3150	7350	7350
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	10500	26250	26250
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	8400	21000	21000
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	8400	15750	21000
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5250	10500	10500
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	5250	10500	10500
158	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	5250	10500	10500
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	5250	12600	12600
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	5250	12600	12600
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	5250	12600	12600
162	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	5250	12600	12600
163	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	3150	10500	10500
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	3150	10500	10500
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	3150	10500	10500
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	4200	10500	10500
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
169	Տվիչի փոխարինում	3150	7350	7350
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	3150	8400	8400
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	10500	10500
6. Առջևի և հետևի կամրջակներ				
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10500	21000	21000
173	Առջևի կամրջակի զլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	5250	12600	12600
174	Առջևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում կամ փոխարինում	5250	12600	12600
175	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	5250	10500	10500

176	Առջևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	3150	6300	6300
177	Կամրջակի յուղի փոխարինում	2100	4200	4200
178	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում		10500	10500
180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7350		
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	10500		
182	Հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում կամ փոխարինում	8400		
183	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի փոխարինում	3150		
184	Հետևի կամրջակի կիսասռնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	3150		
185	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250		
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	7350		
187	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	7350		
188	Կամրջակի տվիչի փոխարինում	5250		
7. Կախոց				
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	15750	31500	31500
190	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3150	8400	8400
192	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
193	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
194	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3150	8400	8400
195	Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում(մեկ անիվի համար)	3150	8400	8400
196	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	2100	6300	6300
197	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	3150	8400	8400
198	Առջևի զսպանակի փոխարինում	3150	8400	8400
199	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	10500	10500
200	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	3150	8400	8400
201	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	8400	8400
202	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	2100	6300	6300
203	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	2100	4200	4200
204	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	2100	6300	6300
205	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	7350	7350
206	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	2100	5250	5250
207	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	2100	4200	4200
208	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	2100	4200	4200
209	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	2100	6300	6300

210	Գնդե հողակապերի փոխարինում	3150	7350	7350
211	կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	6300	6300
212	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2100	6300	6300
213	Ջետևի կախոցի անվաքացքի կարգավորում	8400	16800	16800
214	Ջետևի կայունարարի վռանների փոխարինում	2100	5250	5250
215	կայունարարի կալունակի փոխարինում	3150	6300	6300
216	Ջետևի զսպանակների փոխարինում	5250	10500	10500
217	Ջետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	8400	8400
218	Ջետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3150	8400	8400
219	Ջսպանի փոխարինում	3150	8400	8400
220	Ջսպանի վռանների փոխարինում 1 հատ	2100	5250	5250
221	Ջետևի ցնցամեղմիչի փոխարինում	3150	10500	10500
222	Ջետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	2100	5250	5250
223	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	2100	6300	6300
8. Ղեկային մեխանիզմ				
224	Ղեկասյունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում,	10500	31500	31500
225	Ղեկասյունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	5250	12600	12600
